«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻՑ ԱՌՑԱՆՑ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

03.02.2022թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակից տնօրեն՝ Ի.Վարդանյանի հանձնարարությամբ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջում իրականացվում է հիմնարար բարեփոխումների համալիր միջոցառումներ:

Կատարված աշխատանքների ընթացքը և արդյունավետությունը գնահատելու նպատակով, գործող «Ներքին և արտաքին շահակիցների հետադարձ կապի ապահովման քաղաքականության» համաձայն, ՈԱ պատասխանատուն իրականացրել է առցանց հարցումներ ուսանողների շրջանում:

1. **Հետազոտության նպատակը:** Ուսումնասիրել և վերլուծել Քոլեջի կողմից մատուցվող կրթական ծառայությունների ուժեղ և թույլ կողմերը:
2. **Հետազոտության խնդիրները՝**

- ❖ Բացահայտել ուսանողների շրջանում Քոլեջի ռեսուրսներից և անձնակազմից բավարարվածության մակարդակը:
- ❖ Ստեղծել տվյալների հենք դասախոսական կազմի գործունեության գնահատման համար:
- ❖ Հարցումների արդյունքների հիման վրա բացահայտել խնդիրները և գտնել դրանց լուծման ուղիները:

3. **Ուսանողների հարցման գործընթացի կազմակերպումը**

ՈԱ պատասխանատուի կողմից, համաձայն գործող կարգի՝ 15.11.2021-24.01.2022 թթ. կազմակերպվել է առցանց հարցումներ: Քոլեջի միջնակարգ և հիմնական կրթության հիմքով կրթական ծրագրով սովորող թվով 125 ուսանողներից հարցմանը մասնակցել են 88 ուսանող, այսինքն ուսանողների ընդհանուր թվի մոտ 70 %-ը մասնակցել են հարցմանը և պատասխանել հարցաթերթիկում ներառված հարցերին (Հավելված 1):

Հարցաթերթը պարունակում է 15 հարց:

4. **Հետազոտության ընտրանքի նկարագրություն**

Ուսանողների առցանց հարցումներն անցկացվել են **Google Forms** ծրագրով՝ երկու կրթական ծրագրով սովորող ուսանողների շրջանում:

Ուսանողների ակտիվ մասնակցությունն ապահովվել է Ուսանողական խորհուրդը՝ տարածելով հղումը նրանց ֆեյսբուքյան անձնական էջերում, հորդորելով մասնակցել և պատասխանել անաչառ և օբյեկտիվ:

5.Հարցման արդյունքների ամփոփում

Հարցումների արդյունքներն ամփոփվել են Ուսումական մասի վարիչի կողմից, ներկայացվել տնօրենի տեղակալին և ամբիոններին, ապա նաև զեկուցվել Քոլեջի Տնօրինական խորհրդի նիստին:

Հավելված 1

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1.Քոլեջից ակնկալվող հիմնական պահանջները և բավարարվածությունը

Տվյալները (պատասխանները) ներկայացված են թվերով

Գծանկար № 1



Վերլուծելով առաջին հարցի արդյունքները, կարող ենք հետևություն անել, որ (տարբերակ 1) քոլեջում ուսումնառողներին հնարավորություն է ընձեռում օտար լեզվի ուսուցումը (անգլերեն և ռուսերն) (70), մասնակիցներից ընդամենը 2 հարցվող նշել է ոչ տարբերակը:

Հարցվողների մեծամասնությունը (82) նշել է, որ (տարբերակներ՝ 2 3) քոլեջում կազմակերպվում են արդյունավետ պրակտիկաներ և դասախոսների հետ համագործակ-ցությունը արդյունավետ է իրականացվում (85):

Հաջորդը (տարբերակներ՝ 4 և 6) վերաբերվում էր քոլեջի նյութատեխնիկական ռեսուրսներին՝ լսարանային որակյալ պայմանների, մասնագիտական գրականության, ՏՀՏ և համացանցի տրամադրման ապահովմանը, համապատասխանաբար պատասխանները այդքան էլ գոհացուցիչ չեն հարցվողների 41 և 55-ն են միայն դրական պատասխանել:

Բարելավման կարիք ունի նաև քոլեջում ժամանակին անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման գործընթացները, փաստ է, որ հարցվողներից 66-ը նշել են, որ իրականացվում է, սակայն որպես բարելավման խնդիր, այս հարցին ևս պետք է ուշադրություն դարձնել:

2. Ծանո՞թ եք Ձեր իրավունքներին և պարտականություններին

Գծանկար № 2



Գծանկար 2-ում նեկայացված է քոլեջի ուսանողների տեղեկացվածության մակարդակը իրենց իրավունքներից և պարտականություններից, արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս հետևություն անել, որ հարցվողներից միայն 55 ուսանող է տեղյակ իր իրավունքներին և 68-ը իր պարտականություններին: Հաշվի առնելով այս հանգամանքը, անհրաժեշտ է հանձնարարել մասնագիտական ամբիոններին և ուսանողական խորհրդին կազմակերպել հանդիպումներ ուսանողների հետ և ծանոթացնել վերանայված նոր փաստաթղթերին՝ «Քոլեջի ներքին կարգապահական կանոններ» և «Ուսանողի ուղեցույց», ինչպես նաև ուղղորդել ուսանողների, որ իրենց բոլոր հետաքրքրող տեղեկատվությունը կարող են ստանալ Քոլեջի պաշտոնական վեբ կայքից՝ www.grigoris.am:

Գծանկար № 3



Գծանկար 3-ում նեկայացված տվյալները վկայում է այն մասին, որ քոլեջում ուսանողների իրաունքները պաշտպանվա են: Հարցվողների 87%-ը նշել են այո, 10%-ը նշել են մասամբ միայն 3%-ը նշել է ոչ: Այսինքն, անհրաժեշտ է ուսանողական խորհրդի հետ կազմակերպել համալիր միջոցառումներ և չեզոքացնել նաև 13% հարցվողների մոտ այս խնդիրը:

Գծանկար № 4



Գծանկար № 4.1



Գծանկարներ 4 և 4.1-ը նախորդ գծանկարի տրամաբանական շարունակությունն է, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել և լուծել վերոնշված խնդիրը:

Հարցման տվյալները վկայում են այն մասին, որ այնուհանդերձ ուսանողների իրավունքների ոտնահարման որոշ դեպքեր արձանագրվել են: Խնդրի լուծման համար ուսանողները ամենաշատը դիմել են՝ ուսումնական մասին (25), տնօրենին (20), ՈԱ պատասխանատուին (15) և փոխտնօրենին (12):

Ճիշտ է տվյալները վկայում է այն մասին, որ քոլեջում ուսանողների իրավունքները պաշտպանված են: Հարցվողների 87%-ը նշել են, որ պաշտպանված են՝ այո, 10%-ը նշել են մասամբ, միայն 3%-ը նշել է ոչ: Այսինքն, անհրաժեշտ է ուսանողական խորհրդի հետ համատեղ կազմակերպել համալիր միջոցառումներ և չեզոքացնել նաև 13% հարցվողների մոտ այս խնդիրը:

5. Տեղյա՞կ եք, թե ուսանողներն ինչպես կարող են մասնակցել Քոլեջի կառավարմանը

Գծանկար № 5



Ինչպես երևում է գծապատկերից, հարցման մասնակիցների ընդամենը 37%-ն է տեղյակ ուսանողների մասնակցությանը Քոլեջի կառավարմանը, 29%-ը մասամբ է տեղյակ, իսկ 34%-ը, ընդհանրապես տեղյակ չեն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սկսած 2018 թվականից ուսանողները ակտիվ ներգրավված են եղել Քոլեջի կառավարման մարմիններում (Տնօրինական և մանկավարժական խորհուրդներ), այստեղից կարելի է հետևություն անել, որ ուսանողական խորհուրդը թերացել է տեղեկացնել ուսանողներին այս հարցի վերաբերյալ:

6. Ուսանողների կարծիքը հաշվի առնվո՞ւմ է Քոլեջում որոշումներ կայացնելիս

Գծանկար № 6



Այս հարցին պատասխանողների 69%-ը գտնում է, որ քոլեջի ղեկավարությունը որոշումներ կայացնելիս հաշվի են առնում ուսանողների կարծիքը, 26%-ը նշել են ոչ տարբերակը, իսկ 5%-ը մասամբ տարբերակը: Վերլուծելով արդյունքները, անհրաժեշտ է աշատանքներ տանել հարցվողների 26%-ի հետ, որպեսզի պազել այդ խմբի մոտ ինչ խնդիրներ են առաջացել, որ նշել են ոչ տարբերակը:

7. Ումի՞ց և ինչպե՞ս ուսանողները կարող են ստանալ տեղեկատվություն ուսումնական գործընթացին առնչվող հարցերի և այլնի վերաբերյալ

Գծանկար № 7



Գծանկար 7-ի արդյունքների վերլուծությունը վկայում է այն մասին, որ ուսանողները ուսումնական գործընթացին առնչվող և այլ հարցերի վերաբերյալ պարզաբանումները ստացել են համապատասխանաբար՝ դասախոսներ – 70.3%, ուսումնական մաս – 51.4%, ամբիոներ – 32.4%, իսկ 13.5%-ը քոլեջում հատարարությունների ցուցափեղկի և ֆեյսբուքյան կայքէջից: Արդյունքները գոհացուցիչ են այն առումով, որ քոլեջի դասախոսները ապահովում են հետադարձ կապը ուսանողների հետ, իսկ տեղեկատվության տարածման տեսանկյունից, խնդիրը արդեն լուծվել է Քոլեջի հիմնադիր՝ Մ.Նանյանի կողմից: Արդեն գործում է Քոլեջի ամբողջովին նոր, արդիական պաշտոնական վեբ կայքը:

8. Գնահատեք կրթական ծրագրերի բովանդակությունից, ուսուցման մեթոդաբանությունից և ուսումնական գործընթացի կազմակերպումից բավարարվածությունը

Գծանկար № 8



Գծանկարներ 8 և 8.1-ում ներկայացված են ուսանողների բավարարվածության մակարդակը՝ կրթական ծրագրերի բովանդակությունից, ուսուցման մեթոդաբանությունից և ուսումնական գործընթացի կազմակերպումից: Պատասխանները շատ բազմազան են, գնահատումն իրականացվել է հինգ բալային սանդղակով:

Այսպիսով. Քոլեջում դասնթացների մատուցման ձևից շատ գոհ են՝ (5 միավոր) 40 ուսանող, գոհ են՝ (4 միավոր) 35 ուսանող, բավարարված են՝ (3 միավոր) 10 ուսանող, իսկ անբավարար են գնահատել՝ (2 միավոր) 3 ուսանող:

Ինչ վերաբերվում է ուսումնառության ընթացքում տրված տեսական գիտելիքներին, ձևավորվող գործնական հմտությունները և մասնագիտական կարողությունների ձեռք բերմանը, հարցվողների մոտ 40% գնահատել է 5 և 4 (34 ուսանող):

Գծանկար № 8.1



Գծանկար 8.1-ում ներկայացված 3 հարցերին, ուսանողները տվել են հիմնականում դրական գնահատական՝ 5 և 4 միավոր: Փաստ է, որ 88 մասնակիցներից 76-ը դասախոսների հարգալից վերաբերմունքն ուսանողների նկատմամբ գնահաել են 5 և 4:

Ուսումնասիրման կարիք ունի ուսանողների գիտելիքների գնահատման թափանցիկության և արդարացիության գործոնը, քանի որ հարցվողներից 46 հոգի գնահատել են միջինը 3 միավոր:

1. Քոլեջի և մասնագիտության ընտրությանը նպաստող գործոնները

Գծանկար № 9



Գծանկար 9-ում ներկայացված տվյալները պահանջում են իրականացնել համալիր միջոցառումներ, ինչպես օրինակ. աշխատաժողովների և հանդիպումների կազմակերպում, գործատուների և պոտենցիալ դիմորդների հետ, բաց կամ ցուցադրական ընդլայնված դասերի կազմակերպում, ակտիվացնել քարոզչական աշխատանքները և այլն:

2. Խորհրդատվություն ստանալու նպատակով հիմնականում ու՞մ եք դիմում

Գծանկար № 10



Ինչպես երևում է գծանկարում, ուսանողների 38.9%-ը խորհրդատվություն ստանալու համար դիմում են դասախոսներին, 25%-ը՝ տնօրենին, 19.4%-ը՝ ուսումնական մասի վարիչին, իսկ 5.6%-ն է միայն դիմել՝ փոխտնօրենին և ամբիոնի վարիչին: ՈԱ պատասխանատուին դիմող չի եղել: Այստեղից կարելի է հետևություն անել այն մասին, որ անհրաժեշտ է ակտիվացնել ուսանողների հետ տարվող ուսումնադաստիարակչական աշխատանքները:

3. Գնահատե՛ք Քոլեջի վարչական ստորաբաժանումների գործունեության արդյունավետությունը

Գծանկար № 11



Քոլեջի կառուցվածքային ստորաբաժանումների (տնօրեն, փոխտնօրեն, պրակտիկայի և կարիերայի բաժին, ՄՌԿ և ընդհանուր բաժին) գործունեության արդյունավետությունը հարցվողների մոտ 70%-ը գնահատել են գերազանց (5), 25%-ը՝ լավ (4): Ամբիոնների և հաշվապահության աշխատանքները գերազանց (5) են գնահատել հարցվողների մոտ 30%-ը, լավ և բավարար (4 և 3), մոտ՝ 22%-ը:

Քոլեջի տնօրինության կողմից անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել ամբիոնների և հաշվապահության աշխատանքները բարելավելու ուղղությամբ:

12. Ուսումնական գործընթացում հանդիպե՞լ եք անազնվության դրսևորումների

Գծանկար № 12



Գծանկար 12-ում ներկայացված հարցմանը՝ ուսումնական գործընթացում հանդիպել են արդյոք ուսանողները ակադեմիական անազնվության դրսևորումների, պատասխան-ները շատ գոհացուցիչ են: Հարցվողների մոտ 80%-ը տվել է բացասական պատասխան, որը վկայում է այն մասին, որ Քոլեջում ուսումնական գործընթացը իրականացվում է բաց և թափանցիկ, այսինքն ակադեմիական ազնվության կարգի գործարկումը արդարացված է:

13. Որքանո՞վ եք գոհ դասախոսական կազմի մասնագիտական որակից

Գծանկար № 13

Հարցին՝ «Որքանո՞վ եք գոհ դասախոսական կազմի մասնագիտական որակներից», հարցվողների 89%-ը նշել են՝ «Հիմնականում որակյալ մասնագետներ են» տարբերակը, այսինքն, այս տվյալները վկայում են այն, որ Քոլեջի ղեկավարությունը դասախոսական կազմի ընտրության հարցում, հիմնականում նախապատվությունը տալիս է բարձր որակավորում ունեցող մանկավարժներին:

14. Ուսումնաարտադրական պրակտիկաները նպաստու՞մ են Ձեր մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևավորմանը

Գծանկար № 14



Հարցին՝ «Ուսումնաարտադրական պրակտիկաները նպաստու՞մ են Ձեր մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևավորմանը», հարցվողների գերակշիռ մասը՝ 75%-ը նշել է «Այո» պատասխանը, իսկ 17%-ը նշել է «Մասամբ» տարբերակը: Իհարկե պատասխանները հիմնականում դրական են, սակայն պրակտիկայի և կարիերայի բաժնի պատասխանատուն պետք է մասնագիտական ամբիոնների հետ միասին կազմակերպեն հանդիպում-քննարկումներ ուսանողների հետ և անհրաժեշտության դեպքում վերանայեն պրակտիկաների ծրագրերը:

15. Գնահատեք Ձեր բավարարվածությունը Քոլեջի տրամադրած ռեսուրսներից

Գծանկար № 15



Վերլուծելով գծանկար 15-ի հարցման տվյալները, ապա Քոլեջի կողմից տրամադրած ռեսուրսներից բավարարվածության գնահատականը հիմնականում լավ և բավարար են: Այնուհանդերձ քոլեջի տնօրինության կողմից պետք է միջոցներ ձեռնարկել մի շարք ուղղություններով, մասնավորապես՝ արդիականացնել ուսումնական և լաբորատոր կաբինետների կահավորանքը (22.5%-ը գնահատել է 3 և 2), հետևյալն է.

Քոլեջի ջեռուցման համակարգը 80%-ը գնահատել են միջինը 4.5 միավոր, Քոլեջի համացանցի հասանելիությունը և որակը (45%-ը գնահատել է 3 և 2), գրադարանում, առկա ժամանակակից մասնագիտական գրականության վիճակը (50%-ը գնահատել է 3 և 2), իսկ Քոլեջի ընդհանուր սանիտարահիգիենիկ և սանհանգույցների վիճակը (22.5%-ը գնահատել է 3 և 2):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով կատարված հարցման արդյունքները, կարելի է եզրահանգել, որ Քոլեջն ընդհանուր առմամբ իրականացնում է բաց, թափանցիկ, կոլեգիալ կառավարման մոդելով և արդյունավետ գործունեություն: Առկա որոշ բացասական պատասխանները, չեն կարող բացասական անդրադառնան Քոլեջի կողմից մատուցված ծառայությունների վրա, ինչ վերաբերվում է բարելավման միջոցառումներին և կոնկրետ աշխատանքներին, ապա այդ հարցերը Տնօրինական խորհրդում քննարկվելուց հետո, կտերվեն համապատասխան հանձնարարականներ և կկայացվեն որոշումներ:

ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմք ընդունելով հարցման արդյունքների վերլուծությունը և ուղղորդվելով Քոլեջում կիրառվող ՊԻՍԲ շրջափուլի դրույթները, Քոլեջի 2019-2024թթ. Ռազմավարական զարգացման ծրագրի գործողությունների պլան-ժամանակացույցով պայմանավորված, պալանավորվել են համապատասխան գործողություններ:

Կատարված աշխատանքների արդյունավետությունը հարցման միջոցով ստուգվել և/կամ գնահատվել է: Գնահատման տվյալները քննարկվել են՝ Մանկավարժական խորհրդի նիստում, կայացվել է համապատասխան որոշում, որից հետո հարցը լսվել է Տնօրինական խորհրդում: Համաձայն Քոլեջի կանոնադրության, վերջնական որոշումը կայացվելու է Ընդհանուր ժողովը:

Հաշվի առնելով այս ամենը որպես բարելավում առաջարկվում է.

1. Հնարավորության սահմաններում, բյուջեի ֆինանսական խնայողություններով հաջորդ ուստարվա համար արդիականացնել համակարգչային տեխնիկական ռեսուրսները:
2. Ինտերնետ կապի հասանելիության բարձրացման նպատակով բանակցել ՅուՔոմ ընկերության հետ, անհրաժեշտության դեպքում կնքել նոր պայմանագիր:
3. Արդիականացնել մասնագիտական կաբինետները (ատամնատեխնիկական, դեղագործական և քույրական):
4. Կազմակերպել աշխատաժողով գործատուների, շրջանավարտների և պոտենցիալ դիմորդների համար:
5. Վերանայել Քոլեջի վերաբերյալ տեղեկատվության տարածման մեխանիզմները:
6. Վերանայել պրակտիկաների գործող ծրագրերը:
7. Ակտիվացնել ուսանող-դասախոս փոխհարաբերությունները, այն դարձնելով ավելի արդյունավետ:
8. Մշակել և ներդնել խորհրդատուների ինստիտուտը, նախկին կուրսղեկների փոխարեն:
9. Դասավանդման մեթոդաբանության արդիականացում, ավելի շատ ցուցադրական նյութեր, ուսանողների կողմից ինքնուրույն աշխատանքների ավելացում և այլն:
10. Ուսանողական խորհրդին և մասնագիտական ամբիոններին հանձնարարել ամիսը առնվազն մեկ անգամ կազմակերպել հանդիպումներ ուսանողների հետ, տեղեկացնելով իրենց իրավունքները, պարտականությունները և այլն:
11. Կառավարման մարմիններում ներգրավված ուսանողներին հանձնարարել ավելի ակտիվ գործունեություն իրականացնել:
12. Հանձնարարել մանկավարժական խորհրդին ներկայացնել առաջարկություններ դիտարժան և արդիական միջոցառումների ծրագրերի վերաբերյալ:

ՈԱ պատասխանատու՝ _____ Ա.Գ.Գյոզալյան

26.01.2022թ.

«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ

ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՌՅԱՆՑ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

03.02.2022թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջում իրականացվող հիմնարար բարեփոխում-ների համալիր միջոցառումների շրջանակում կազմակերպվում են ներքին շահակիցների կարիքների վերհաում:

Կատարված աշխատանքների ընթացքը և արդյունավետությունը գնահատելու նպատակով, գործող «Ներքին և արտաքին շահակիցների հետադարձ կապի ապահովման քաղաքականության» համաձայն, ՈԱ պատասխանատուն իրականացրել է առցանց հարցումներ նաև դասախոսների շրջանում:

5. **Հետազոտության նպատակը:** Ուսումնասիրել և վերլուծել Քոլեջի կողմից մատուցվող կրթական ծառայությունների ուժեղ և թույլ կողմերը:
6. **Հետազոտության խնդիրները՝**

- ❖ Բացահայտել դասավանդողների Քոլեջի ռեսուրսներից և վարչական անձնակազմից բավարարվածության մակարդակը:
- ❖ Ստեղծել տվյալների հենք դասախոսական կազմի գործունեության բարելավման համար:
- ❖ Հարցումների արդյունքների հիման վրա բացահայտել խնդիրները և գտնել դրանց լուծման ուղիները:

7. **Դասախոսների հարցման գործընթացի կազմակերպումը**

ՈԱ պատասխանատուի կողմից, համաձայն գործող կարգի՝ 15.11.2021-24.01.2022 թթ. կազմակերպվել է առցանց հարցումներ: Քոլեջի դասախոսական անձնակազմի թվով 20 դասախոսներից հարցմանը մասնակցել են 17 դասախոս, այսինքն դասախոսների ընդհանուր թվի 85 %-ը մասնակցել են հարցմանը և պատասխանել հարցաթերթիկում ներառված հարցերին (Հավելված 1):

Հարցաթերթը պարունակում է 25 հարց:

8. **Հետազոտության ընտրանքի նկարագրություն**

Դասախոսների առցանց հարցումներն անցկացվել են **Google Forms** ծրագրով:

Դասախոսների ակտիվ մասնակցությունն ապահովվել է Ուսումնական մասը՝ տարածելով հղումը նրանց ֆեյսբուքյան անձնական էջերում, հորդորելով մասնակցել և պատասխանել անաչառ և օբյեկտիվ:

5.Հարցման արդյունքների ամփոփում

Հարցումների արդյունքներն ամփոփվել են ՈԱ պատասխանատուի և Ուսումական մասի վարիչի կողմից, ներկայացվել տնօրենի տեղակալին և ամբիոններին, ապա նաև զեկուցվել Քոլեջի Տնօրինական խորհրդի նիստին:

Հավելված 1

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հարցաշարի առաջին հարց **«Նշեք Ձեր սեռը»,** 17 մասնակիցներից՝ 3 արական սեռի իսկ 14 իգական սեռի ներկայացուցիչներ:

Երկրորդ հարցը վերաբերվում էր մասնակիցների տարիքին, պատկերը հետևյալն է.

Տվյալները (պատասխանները) ներկայացված են թվերով և տոկոսով

Գծանկար № 1



Մասնակիցների միջին տարիքը կազմում է 33 տարեկան, որը փաստում է այն մասին, որ Քոլեջի ղեկավարությունը իրականացնում է անձնակազմի երիտասարդացման ճիշտ քաղաքականություն:

3. Արդյոք տեղեկացվա՞ծ եք Բոլոնիայի գործընթացի դրույթներին

Տվյալները (պատասխանները) ներկայացված են թվերով

Գծանկար № 2



Վերլուծելով երրորդ հարցի արդյունքները, կարող ենք հետևություն անել, այն մասին, որ Քոլեջի դասախոսների 69 %-ը տեղյակ է Բոլոնիայի գործընթացից, իսկ 31 %-ը մասամբ է տեղյակ: Պատասխանի այս տարբերակները վկայում են, որ Քոլեջում պարբերաբար կազմակերպվել են տեղեկատավական հանդիպումներ և քննարկումներ: Դասախոսական

կազմը տեղեկացված է Հայաստանում իրականացվող կրթության բարեփոխումներից, նորարարություններից և այլն:

4. Արդյոք տեղեկացվա՞ծ եք Քոլեջում իրականացվող կրթական բարեփոխումներից

Մասնակիցների 100%-ը պատասխանել է այո, ինչը վկայում է, որ Քոլեջում իրականացվող բարեփոխումներին հենց իրենք՝ դասախոսները անմիջական մասնակցություն ունեն այդ գործընթացներին:

5. Ներքին տեղեկատվական համակարգը Քոլեջում արդյունավե՞տ է գործում

Տվյալները (պատասխանները) ներկայացված են թվերով

Գծանկար № 3



Գծանկար 3-ում հարցվողների 94%-ը դրական են գնահատել Քոլեջում գործող տեղեկատվական համակարգը, միայն 6%-ը (1) հարցվող նշել է մասամբ այո: Այսպիսով, հարցման արդյունքները վկայում են այն մասին, որ Քոլեջում իրականացված բարեփոխումները դրական են անդրադարձել նաև տարբեր տեսակի տեղեկատվության տրամադրման և տարածման համակարգի վրա:

6. Ինչպե՞ս եք տեղեկանում ուս. գործընթացին վերաբերող տարբեր հարցերի մասին

Տվյալները (պատասխանները) ներկայացված են թվերով

Գծանկար № 4



Գծանկար 4-ի արդյունքների վերլուծությունը վկայում է այն մասին, որ դասախոսները ուսումնական գործընթացին առնչվող և այլ հարցերի վերաբերյալ պարզաբանումները

ստացել են ուսումնական մասից – 15 հարցվող, տնօրինություն – 7 հարցվող, իսկ Քոլեջի կայքից և ամբիոններից 5 ական հարցվողներ, միայն 1 հարցվող է ստացել հայտարարություններից: Արդյունքներից կարելի է եզրակացնել, որ դասախոսների մեծ մասը կայքից չեն օգտվում և չեն հետևում հայտարարություններին:

Այսպիսով, անհրաժեշտ է ակտիվացնել տեղեկատվության ստացման մեխանիզմները, մասնավորապես՝ ամբիոնի վարիչներին հանձնարարել դասախոսներին իրազեկել, որ Քոլեջի պաշտոնական կայքը ամբողջովին արդիականացված է և պարունակում է ամբողջական տեղեկատվական բազա:

7. Քոլեջում առկա՞ են մեխանիզմներ աշխատակիցների կարծիքն արտահայտելու համար

Գծանկար № 5



Այս հարցին պատասխանողների (13) 76%-ը գտնում է, որ քոլեջի ղեկավարությունը որոշումներ կայացնելիս հաշվի են առնում դասախոսների կարծիքը, 18%-ը (3) նշել են մասմբ այո տարբերակը, իսկ 6%-ը (1) դժվարանում է պատասխանել տարբերակը: Վերլուծելով արդյունքները, անհրաժեշտ է աշատանքներ տանել հարցվողների 18%-ի հետ, որպեսզի պազել այդ խմբի մոտ ինչ խնդիրներ են առաջացել, որ նշել են մասամբ այո տարբերակը: Հաշվի առնելով հարցման տվյալները, կարելի թ փաստել, որ դասախոսների գերակշիռ մասը մասնակից են Քոլեջի կառավարման գործընթացներում կարծիք հայտնելու, իրենց տեսակետը և առաջարկությունները ներկայացնելու խորհրդակցական մարմիններում:

8. Ծանո՞թ եք Քոլեջի դասախոսական կազմի իրավունքներին և պարտականություններին

8-րդ հարցին հարցվողների (17) 100 %-ը պատասխանել է **այո:** Այսինքն, Քոլեջը իրականացնում է արդյունավետ, բաց և թափանցիկ անձնակազմի կառավարում, որը բխում է Քոլեջի «ՄՌԿ քաղաքականությունից», այն է՝ անձնակազմը տիրապետում է Քոլեջում մշակված և ներդրված ընթացակարգերին: Սկսած 2019-2020 ուսումնական տարվանից Քոլեջում մշակվել և ներդրվել են ուսումնական և կառավարչական գործընթացներին վերաբերվող մի շարք ներքին նորմատիվ փաստաթղթեր:

9. Ծանոթացե՞լ եք Քոլեջում գործող պաշտոնի անձնագրով սահմանված Ձեր աշխատանքային բնութագրին

Գծանկար № 6



Ինչպես երևում է հարցման արդյունքներից, հարցվողների (15) 88%-ը տեղյակ է «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի «Հաստիքացուցակում ներառված պաշտոնների նկարագրեր» անձնագրից, իսկ (3) 12%-ը մասամբ է տեղեկացված: Արդյունքների նման պատկերը պարտավորեցնում է ՄՌԿ և ընդհանուր բաժնին սեղմ ժամկետներում կազմակերպել հանդիպում դասախոսական կազմի հետ և ևս մեկ անգամ հանգամանորեն ներկայացնել պաշտոնների անձնագրի հետ:

Հավելենք նաև, որ պաշտոնի անձնագրերը ամբողջությամբ հասանելի են Քոլեջի պաշտոնական վեբ կայքում:

10. Հստա՞կ են արդյոք Քոլեջի կողմից դասախոսներին ներկայացվող պահանջները՝ ըստ պաշտոնի անձնագրի

Գծանկար № 7



Ինչպես երևում է գծանկար 7-ում ներկայացված տվյալներից, պարզ է դառնում, որ հարցվողների (16) 94%-ը նշել են՝ **այո** տարբերակը: Այսինքն, Քոլեջի կողմից դասախոսներին ներկայացվող պահանջները՝ ըստ պաշտոնի անձնագրի հստակ են և հասկանալի: Նման ցուցանիշը փաստում է այն մասին, որ ՄՌԿ և ընդհանուր բաժնի կողմից իրականացվում է հստակ և արդյունավետ աշխատանք:

11. Տեղյա՞կ եք Քոլեջի կառավարմանը դասախոսի մասնակցության ձևերին

Գծանկար № 8



Ինչպես երևում է գծանկար 8-ից, հարցման մասնակիցների (16) 94%-ը տեղյակ են դասաոսների մասնակցությանը Քոլեջի կառավարման գործընթացներում, իսկ 6%-ը մասամբ է տեղյակ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Քոլեջի հիմնական դասախոսական կազմը ընդգրկված է Քոլեջի բոլոր խորհրդակցական մարմիններում, ապա նման պատկերը ակնայ է:

12. Քոլեջում որոշում կայացնելիս հաշվի առնվու՞մ է դասախոսների կարծիքը

Գծանկար № 9



Այս հարցին պատասխանողների (15) 88%-ը գտնում է, որ քոլեջի ղեկավարությունը որոշումներ կայացնելիս հաշվի են առնում դասախոսների կարծիքը, իսկ (2) 12%-ը նշել են մասամբ տարբերակը: Վերլուծելով արդյունքները, անհրաժեշտ է աշխատանքներ տանել հարցվողների 12%-ի հետ, որպեսզի պազել այդ խմբի մոտ ինչ խնդիրներ են առաջացել, որ նշել են մասամբ տարբերակը:

13. Ինչպե՞ս եք տեղեկանում Քոլեջի ընթացիկ գործունեության մասին

Տվյալները (պատասխանները) ներկայացված են թվերով

Գծանկար № 10



Ինչպես երևում է գծանկար 10-ում, հարցվողերից կեսից ավելին՝ 10 մասնակից Քոլեջի ընթացիկ գործունեության մասին տեղեկությունը ստանում են ամբիոնի նիստերում, 9-ը դասախոս՝ Մնկավարժական խորհրդի նիստերին մասնակցելով: Քոլեջի ընթացիկ գործունեության վերաբերյալ (հայտարարություն, Քոլեջի կայք և սոց ցանցեր), համապասխանաբար՝ 5, 3 և 1 հարցվողներ են տեղեկանում:

Տվյալների ըդհանրացումը պարտավորեցնում է Ուսումնական մասին և ՈԱ պատասխանատուին ակտիվացնել անհրաժեշտ տեղեկատվության տարածման մեխանիզմները:

Գծանկար № 11



Գծանկար 11-ում ներառված են 4 հարց, հիմնական հարցի (14. Քոլեջում ստեղծվա՞ծ են անհրաժեշտ պայմաններ Ձեր աշխատանքային պարտականությունները կատարելու

համար), տվյալները այդքան էլ գոհացուցիչ չեն, որին անհրաժեշտ է ուշադրություն դարձնել:

18. Ու՞մ եք դիմում Քոլեջում տրամադրած ռեսուրսներից դժգոհությունների կամ առաջարկությունների դեպքում

Գծանկար № 12



Քոլեջում տրամադրած ռեսուրսներից դժգոհությունների կամ առաջարկությունների դեպքում հարցվողների կեսից ավելին (11) 65%-ը դիմում է անձամբ տնօրենին, ուսումնական մասի վարիչին 18%-ը և միայն 17 % -ը ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչին: Այսպիսով, տվյալները վկայում են այն մասին, որ ամբիոնի վարիչներին չեն դիմում, այս կամ այն խնդիրների համար: Այստեղից կաելի է հեևություն անել այն մասին, որ կամ չեն վստահում, կամ էլ տվյալ պահին չեն կարողանում ամբիոնի վարիչին տեսնել: Այստեղ մեծ աշխատանք ունի անելու ՄՌԿ և ընդհանուր բաժինը: Բաժնի կողմից անհրաժեշտ է կզմակերպել հանդիումներ դասախոսների հետ, վեր հանել տարբեր հարցեր և խնդիրներ:

Գծանկար № 13



Գծանկար 13-ում ներառված են 2 հարցադրում, որտեղ հիմնական ներկայացված տվյալները մտահոգիչ են: Ինչպես երևում է՝ 19. Դասավանդման գործընթացը կազմակերպելու համար լսարաններն ապահովված են անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով հարցին, դասախոսների կեսից ավելին 71%-ը նշել է **մասամբ այո** պատասխանը, միայն 29%-ն է նշել **այո** տարբերակը:

Այստեղից հետևություն, որ ընդամենը մի քանի լսարաններ են ապահովված անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով, հաշվի առնելով այս հանգամանքը անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել բարելավելու Քոլեջի նյութատեխնիկական ռեսուրսները:

Նույն պատկերն է նաև գործնական և լաբորատոր դասընթացներն արդյունավետ կազմակերպելու լսարաններին վերաբերվող հարցադրումը՝ 65%-ը նշել է **մասամբ այո** պատասխանը, միայն 24%-ն է նշել **այո** տարբերակը:

21. Ըստ Ձեզ պրակտիկաները, գործնական և լաբորատոր դասընթացներն արդյունավետ կազմակերպելու և անցկացնելու համար խմբում ընդգրկված ուսանողների թիվը պետք է լինի

Գծանկար № 14



Համաձայն հարցվողների 63%-ի կարծիքով, պրակտիկաները, գործնական և լաբորատոր դասընթացներն արդյունավետ կազմակերպելու և անցկացնելու համար խմբում ցանկալի է ընդգրկել առավելագույնը 7 ուսանող, արցվղների 25%-ի կարծիքով այդ թվը կարող է լինել առավելագույնը 12 ուսանող, իսկ 12%-ը, կարծում է, որ ուսանողների թիվը կարող է լինել մինչև 18 ուսանող:

Իհարկե, որակի ապահովման տեսանկյունից 7 հոգանոց խմբերը ավելի նպատակային կլինեն, այս հարցը հնարավորության դեպքում անհրաժեշտ է քննարկել տնօրինական և մանկավարժական խորհուրդներում:

22. Որքանո՞վ եք Ձեր դասախոսական աշխատանքի համար կարևորում գիտական գործունեությունը

Գծանկար № 15



Վերլուծելով գծանկար 15-ում հարցի պատասխանները, կարելի է փաստել, որ դասախոսների զգալի մասը 65%-ի համար գիտական գործունեությունը կարևորվում է, 18% -ի համար՝ անհրաժեշտություն է, իսկ 12 և 5% -ի համար քիչ կարևոր է և կարևոր չէ:

Այսինքն, անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել ակտիվացնելու գիտական և հետազոտական գործունեությունը Քոլեջում:

23. Քոլեջն ապահովում է անհրաժեշտ պայմաններ (նյութատեխնիկական բազա, ֆինանսավորում) գիտահետազոտական աշխատանքներով զբաղվելու համար

Գծանկար № 16



Քոլեջն ապահովում է անհրաժեշտ պայմաններ (նյութատեխնիկական բազա, ֆինանսավորում) գիտահետազոտական աշխատանքներով զբաղվելու համար հարցին, հարցվողների 71%-ը նշել է **այո** տարբերակը, իսկ 29%-ը նշել է **մասամբ** տարբերկը: Այսնքն, արդյունքներից պարզ է դառնում, որ դասախոսների համար գիտահետազոտական աշխատանքներով զբաղվելու համար Քոլեջի ղեկավարությունը տրամադրում է անրաժեշտ աջակցություն:

24. Նշեք խնդրում եմ գիտական գործունեության խոչընդոտները

Գծանկար № 17



Քոլեջում առկա գիտական գործունեության խոչընդոտների վերաբերյալ հարցին, հարցվողների պատասխանների վերլուծությունից պարզ երևում է, որ 53%-ը խոչընդոտներ չեն տեսնում, 35%-ը նշել է ժամանակի սղությունը, իսկ ոչ բավարար համագործակցություն և հետազոտական սարքավորումների պակաս տարբերակները նշել են 6%-ը:

Այստեղից կարելի է եզրակացնել, որ անհրաժեշտ է արդիակացնել Քոլեջում առկա արքավորումները և ընդլայել համագործակցությունը, մասնավորապես հետազոտական ողղությամբ

25. Նշեք մինչև երեք հիմնահարց, որոնք անհրաժեշտ է փոխել Քոլեջում

Գծանկար № 18



Հարցման վերջին 25-րդ հարցը ձևակերպված էր որպես բաց հարց, հարցվողները մինչև 3 պատասխան նշել են: Գծանկար 18-ում նեկայացված տվյալները ամբողջովին ներառված են Քոլեջի 2019-2024թթ. ՌԶԾ-ում և համարվում են առաջնային նպատակային խնդիրներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով կատարված հարցման արդյունքները, կարելի է եզրահանգել, որ Քոլեջում իրականացվող բարեփոխումները, ընդհանուր առմամբ իրականացնում են թափանցիկ, կոլեգիալ կառավարման մոդելով և որոշ չափով նաև արդյունավետ: Առկա որոշ բացասական տվյալները, չեն կարող բացասական անդրադառնալ Քոլեջի կողմից մատուցված ծառայությունների վրա, ինչ վերաբերվում է բարելավման միջոցառումներին և կոնկրետ աշխատանքներին, ապա երհանված խնդիրները, ըստ առաջնահերթության Տնօրինական խորհրդում քննարկվելուց հետո կկայացվեն համապատասխան որոշումներ և կտրվեն կոնկրետ հանձնարարականներ:

ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմք ընդունելով հարցման արդյունքների վերլուծությունը և ուղղորդվելով Քոլեջում կիրառվող ՊԻՍԲ շրջափուլի դրույթները, Քոլեջի 2019-2024թթ. Ռազմավարական զարգացման ծրագրի գործողությունների պլան-ժամանակացույցով պայմանավորված, պալանավորվել են համապատասխան գործողություններ:

Կատարված աշխատանքների արդյունավետությունը հարցման միջոցով ստուգվել և/կամ գնահատվել է: Գնահատման տվյալները քննարկվելու են՝ Մանկավարժական խորհրդի նիստում, որից հետո ամփոփված հարցերը կլսվեն մոտակա Տնօրինական խորհրդում: Համաձայն Քոլեջի կանոնադրության, վերջնական որոշումը կայացվելու է Ընդհանուր ժողովը:

Հաշվի առնելով այս ամենը որպես բարելավում առաջարկվում է.

1. Հնարավորության սահմաններում, բյուջեի ֆինանսական խնայողություններով հաջորդ ուստարվա համար արդիականացնել համակարգչային տեխնիկական ռեսուրսները:

2. Ինտերնետ կապի հասանելիության բարձրացման նպատակով բանակցել ինտերնետ ծառայություն մատուցող ընկերությունների հետ, անհրաժեշտության դեպքում կնքել նոր պայմանագիր:
3. Արդիականացնել մասնագիտական կաբինետները (ատամնատեխնիկական, դեղագործական և քույրական):
4. Կազմակերպել գիտաժողովներ, կոնֆերասներ և այլ գիտական միջոցառումներ:
5. Վերանայել Քոլեջի վերաբերյալ տեղեկատվության տարածման մեխանիզմները:
6. Վերանայել պրակտիկաների գործող ծրագրերը:
7. Կատարելագործել խորհրդատուների ինստիտուտը:
8. Ակտիվացնել ուսանողական խորհրդի հետ մասնագիտական ամբիոններում գիտական խմբակների ստեղծման աշխատանքները:
9. Կառավարման և խորհրդակցաան մարմիններում ներգրավված դասախոսներին հանձնարարել ավելի ակտիվ գործունեություն իրականացնել:
10. Հանձնարարել մանկավարժական խորհրդին ներկայացնել առաջարկություններ դիտարժան և արդիական միջոցառումների ծրագրերի վերաբերյալ:

ՈԱ պատասխանատու՝ _____ Ա.Գ.Գյոզալյան
03.02.2022թ.